ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 ապրիլի 2013թ. թիվ 53-Ա

«ՎԱՆԱՁՈՐԻ ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ»
ՊՓԲԸ-Ի ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի «իդ» կետի, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ի հաստիքացուցակը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2012թ. մայիսի 30-ի «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ի հաստիքացուցակը հաստատելու մասին» թիվ 101-Ա որոշումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. ապրիլի 8
ք.Վանաձոր